ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շահումյան
համայնք, ՀՀ Լոռու մարզ, գ. Շահումյան 1փ. 66, Հեռ. (0322) 3
84 62, 3 78 97 , shahumyan.lori@mta.gov.am

N Ե-28/18
06 փետրվար 2018թ.

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ
ԱՐԹՈՒՐ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

Կից ներկայացնում եմ Շահումյան համայնքի ավագանու 30.01.2018թ-ի թիվ 01-Ա, 02-Ն, 03-Ն, 04-Ա և 05-Ա որոշումները:

Առդիր 10 թերթ:

2/6/2018

X

Համայնքի ղեկավար՝ **Էդիկ Մանուկյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շահումյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Շահումյան, (0322) 3 84 62, 3 78 97, shahumyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ՀՈՒՆՎԱՐԻ 2018թվականի N 01-Ա

ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 Թ-Ի ՀՈՒՆՎԱՐԻ 30-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի դրույթներով՝ **ավագանին որոշում է.**
Հաստատել Շահումյան համայնքի ավագանու 2018թ-ի հունվարի 30-ի նիստի օրակարգը.

ՕՐԱԿԱՐԳ

2018թ-ի հունվարի 30-ի թիվ 01 նիստի

1. Շահումյան համայնքի 2018թ-ի բյուջեում կատարվող փոփոխությունները հաստատելու մասին:
2. Շահումյան համայնքի 2017թ-ի բյուջեի կատարման տարեկան և զարգացման հնգամյա ծրագրի իրականացման հաշվետվությունների մասին:
3. Հողի հարկի գծով արտոնություններ սահմանելու մասին:
4. Շահումյան համայնքի 2018թ-ի տարեկան աշխատանքային պլանը հաստատելու մասին:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՐՄԵՆՅԱՆ ՀԱՅԿԱՐԱՄ
2. ԱՔՈՒԼՅԱՆ ՍԵՎԱԿ
3. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԵԼԵՆԱ
4. ՂՈՒՄԱՇՅԱՆ ԱՐՄԵՆ
5. ՄԱՆՈՒԿՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ
6. ՄԱՆՎԵԼՅԱՆ ԿԱՄՈ

Համայնքի ղեկավար՝ ԷԴԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շահումյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Շահումյան, (0322) 3 84 62, 3 78 97, shahumyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ՀՈՒՆՎԱՐԻ 2018թվականի N 02-Ն

ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2018Թ-Ի ԲՅՈՒՋԵՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական Ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետի, ,, Բյուջետային համակարգի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի դրույթներով՝

ավագանին որոշում է.

Հաստատել Շահումյան համայնքի 2018թ-ի բյուջեում 30.01.2018թ-ին կատարված փոփոխությունները:

1. Եկամուտների գծով

Ընդամենը - 67 220 200 /վաթսունյոթ միլիոն երկու հարյուր քսան հազար երկու հարյուր/ դրամ այդ թվում՝

. վարչական բյուջեի մասով - 67 220 200 /վաթսունյոթ միլիոն երկու հարյուր քսան հազար երկու հարյուր/ դրամ

. ֆոնդային բյուջեի մասով - 0 / զրո / դրամ

2. Ծախսերի գծով

Ընդամենը - 70 609 400 /յոթանասուն միլիոն վեց հարյուր ինը հազար չորս հարյուր/ դրամ այդ թվում՝

. վարչական բյուջեի մասով - 67 220 200 /վաթսունյոթ միլիոն երկու հարյուր քսան հազար երկու հարյուր/ դրամ

. ֆոնդային բյուջեի մասով - 3 389 200 /երեք միլիոն երեք հարյուր ութսունինը հազար երկու հարյուր/ դրամ:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՐՄԵՆՅԱՆ ՀԱՅԿԱՐԱՄ
2. ԱՔՈՒԼՅԱՆ ՍԵՎԱԿ
3. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԵԼԵՆԱ
4. ՂՈՒՄԱՇՅԱՆ ԱՐՄԵՆ
5. ՄԱՆՈՒԿՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ
6. ՄԱՆՎԵԼՅԱՆ ԿԱՄՈ

Համայնքի ղեկավար՝ ԷԴԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շահումյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Շահումյան, (0322) 3 84 62, 3 78 97, shahumyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ՀՈՒՆՎԱՐԻ 2018թվականի N 03-Ն

ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 82-րդ հոդվածի 7-րդ մասով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 8-րդ մասով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ մասով՝ Շահումյան համայնքի ավագանին.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

1. Հաստատել Շահումյան համայնքի 2017 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը՝ համաձայն հավելված 1-ի:
2. Հաստատել 2017 թվականին Շահումյան համայնքի զարգացման հնգամյա ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը՝ համաձայն հավելված 2-ի:
3. Սույն որոշումն օրենքով սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն պետական իրավական փորձաքննություն անցկացնելու համար:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՐՄԵՆՅԱՆ ՀԱՅԿԱՐԱՄ
2. ԱՔՈՒԼՅԱՆ ՍԵՎԱԿ
3. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԵԼԵՆԱ
4. ՂՈՒՄԱՇՅԱՆ ԱՐՄԵՆ
5. ՄԱՆՈՒԿՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ
6. ՄԱՆՎԵԼՅԱՆ ԿԱՄՈ

Համայնքի ղեկավար՝ ԷԴԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Հավելված 1
Շահումյան համայնքի ավագանու
2018 թ-ի հունվարի 30-ի թիվ 03-Ն որոշման

Շահումյան համայնքի 2017թ. Տարեկան հաշվետվություն

Շահումյան համայնքի 2017թ. Բյուջեն կատարվել է.

ա) եկամուտների գծով ՝ 100.5 %- ով 63687.1 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 64026.0 հազար դրամ:

- Սեփական եկամուտները (բացի տրանսվերտներից և պատվիրակված լիազորություններից) նախատեսված 8404.2 հազար դրամի դիմաց փաստացի կազմել են 8787.5 հազար դրամ կամ բյուջեն սեփական եկամուտների գծով կատարվել է 104.5 - ով: Նախորդ տարվա համեմատությամբ ավել է կատարվել 1237.0 հազար դրամով:

- Պաշտոնական դրամաշնորհների գծով (Համահարթեցման սկզբունքով տրվող դոտացիա և այլ դոտացիա) նախատեսված 55282.9 հազար դրամի դիմաց կազմել են 55238.5 հազար դրամ կամ կատարողականը կազմել է 100 %:

- Վարչական բյուջեի Տարեսկզբի մնացորդը կազմել է 1028.4 հազա դրամ:

- Ֆոնդային բյուջեի տարեսկզբի մնացորդը կազմել է 314.4 հազ.դրամ:

Վարչական բյուջեի տարեսկզբի մնացորդը ՝ 1028.4 հազար դրամ, ամբողջությամբ ուղղվել են 2017թ.-ի ֆոնդային բյուջեի ծախսերի իրականացման համար:

Հողի հարկ

Հողի հարկի գծով եկամուտները նախատեսված 2254.9 հազար դրամի դիմաց փաստացի կատարվել է 2368.8 հազար դրամ կամ կատարողականը կազմել է 105%: Նախորդ տարվա համեմատությամբ ավել է կատարվել 389.5 հազար դրամ կամ կատարվել է 119.7%-ով:

Գույքահարկ

(փոխադրամիջոց և շինություն)

Գույքահարկի գծով եկամուտները նախատեսված 4406.6 հազար դրամի դիմաց փաստացի կատարվել է 4185.0 հազար դրամ կամ կատարողականը կազմել է 95%: Նախորդ տարվա համեմատությամբ ավել է գանձվել 91.2 հազար դրամ կամ կատարվել է 102.2 ով%:

Տեղական տուրքեր

Տեղական տուրքերը նախատեսված 227 հազար դրամի դիմաց փաստացի կատարվել են 226.7 հազար դրամ կամ կատարողականը կազմել է 99.9 %: Նախորդ տարվա համեմատությամբ ավել է կատարվել 75.0 հազար դրամ կամ 149.4 %-ով:

Համայնքի սեփականություն հանդիսացող հողերի վարձավճար

Համայնքի սեփականություն հանդիսացող հողերի վարձավճարը նախատեսված 1025.7 հազար դրամի դիմաց փաստացի կատարվել է 1422.7 հազար դրամ կամ կատարողականը կազմել է 138.7 %: Նախորդ տարվա համեմատությամբ ավել է կատարվել 487.0 հազար դրամ կամ կատարվել է 62.5%-ով:

Ֆոնդային բյուջեի եկամուտներ

Ֆոնդային բյուջեի եկամուտ է հանդիսացել տարեսկզբի ազատ մնացորդը՝ 314.4 հազ.դրամը, վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացում 1658.0 հազ.դրամ:

Ընդամենը ֆոնդային բյուջեի եկամուտը կազմել է 3745.9 հազար դրամ:

Վարչական բյուջեի ծախսեր

Վարչական բյուջեի ծախսերը նախատեսված 63687.1 հազար դրամի դիմաց կատարվել է 61550.3 հազար դրամ, կամ 96.6 %-ով:

- Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	32960.1	հազ. դրամ
- Գյուղատնտեսություն	877.7	հազ.դրամ
- Ճանապարհի ընթացիկ նորոգում	1500,0	հազ.դրամ
- Աղբահանում	1854.0	հազ.դրամ
- Սելավատարների մաքրում	1877.0	հազ.դրամ
- Ջրամատակարարում	400.0	հազ.դրամ
- Փողոցների լուսավորում	798.5	հազ.դրամ

- Կրթամարզամշակութային համալիր	14055.0 հազ.դրամ
- Մշակույթային միջոցառումներ	1400.0 հազ.դրամ
- Հասարակական կազմակերպություններին	30.0 հազ.դրամ
- Առաջին և 10-րդ դասարանցիներին	1100.0 հազ.դրամ
- Հարազատին կորցրած ընտանիքներին	120.0 հազ.դրամ
- Նորածիններին	225.0 հազ.դրամ
- Անապահով ընտանիքներին օգնություն	2695.0 հազ. դրամ

Ֆոնդային բյուջեի ծախսեր

Ֆոնդային բյուջեի գծով ծախսեր կատարվել է	2832.5 հազ. դրամ:
Որից՝	
Վարչական սարքավորումների ձեքբերում	236,5 հազ.դրամ:
Գյուղ տեխնիկայի և սարքավորմների ձեռք բերում	2596,0 հազ.դրամ;

Բյուջեի կատարման արդյունքում ծախսերի գծով պարտքեր չեն գոյացել:

Շահումյան համայնքի ղեկավար Է. Մանուկյան

Հավելված 2
Շահումյան համայնքի ավագանու
2018 թ-ի հունվարի 30-ի թիվ 03-Ն որոշման

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Շահումյան համայնքի 2017-2021թթ. սոցիալ տնտեսական զարգացման հնգամյա ծրագրում ընդգրկված թվով 7 առաջնահերթ խնդիրներից (ծրագրերից) 2017թ-ին նախատեսված էր իրականացնել հետևյալ 4 հարցերը.

1. Շահումյան համայնքի տարածքով անցնող Տանձուտ գետը բերվածքներից մաքրելու, ափերը քարե և բետոնե շարվածքներով ամրացնելու աշխատանքներ:
2. Մանկապարտեզի համար գույքի ձեռքբերում:
3. Հին գերեզմանատան փլուզման վերականգնում, ցանկապատի վերանորոգում:
4. Տրակտորի ձեռքբերում:

2017թ-ի ընթացքում վերը նշված չորս խնդիրները լուծվել են, ծրագրերն իրականացվել են ամբողջությամբ, բացառությամբ „Մանկապարտեզի համար գույքի ձեռքբերման„ ծրագիրը, որն իրականցվել է մասամբ: Համայնքը կատարել է ծրագրի իրականացման համար իր կողմից կատարվելիք 1270.0 հազ. դրամի չափով ներդրումը, սակայն ներդրողի կողմից գույքի տրամադրումը ընթացքի մեջ է:

Շահումյան համայնքի ղեկավար Է. Մանուկյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շահումյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Շահումյան, (0322) 3 84 62, 3 78 97, shahumyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ՀՈՒՆՎԱՐԻ 2018թվականի N 04-Ա

ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով 21.03.2012թ-ի ,,Հողի հարկի մասին Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին,,Հայաստանի Հանրապետության օենքի 1-ին հոդվածի դրույթներով, հաշվի առնելով Շահումյան համայնքի ներքոնշյալ բնակիչների դիմումները, Շահումյանի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի ,,Շահումյան համայնքի զոհված ազատամարտիկների ընտանիքների անդամների նկատմամբ հողի հարկի արտոնություն սահմանելու մասին,, և ,,Արցախյան պատերազմին մասնակցած կամավորների նկատմամբ հողի հարկի արտոնություն սահմանելու մասին,, զեկուցագրերը՝ Շահումյան համայնքի ավագանին.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

Շահումյան համայնքի ներքոհիշյալ բնակիչներին ազատել հողի հարկի գծով հարկային պարտավորություններից.

1. Զոհված ազատամարտիկների ընտանիքներ.

1) Մամյան Արսեն - 39833 /երեսունինը հազար ութ հարյուր երեսուներեք/ դրամ:

2) Ավանեսյան Արամայիս - 8676 /ութ հազար վեց հարյուր յոթանասունվեց/ դրամ:

3) Աղբալյան Օֆելյա - 11043 /տասնմեկ հազար քառասուներեք/ դրամ:

4) Մամյան Լամարա - 7388 /յոթ հազար երեք հարյուր ութսունութ/ դրամ:

2. Արցախյան պատերազմին մասնակցած, սոցիալապես անապահով կամավորներ.

1) Բարսեղյան Յուրա - 11207 /տասնմեկ հազար երկու հարյուր յոթ/ դրամ:

2) Զավուշյան Սեյրան - 12256 /տասներկու հազար երկու հարյուր հիսունվեց/ դրամ:

3) Խաչիկյան Արամայիս - 45621 /քառասունհիինգ հազար վեց հարյուր քսանմեկ/ դրամ:

3. Համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներ.

1) Քոսյան Հրանտ - 2710 /երկու հազար յոթ հարյուր տաս/ դրամ:

2) Աղբալյան Արթուր - 16040 /տասնվեց հազար քառասուն/ դրամ:

3) Հովհաննիսյան Յակով - 5899 /հինգ հազար ութ հարյուր ինսունինը/ դրամ:

4) Սահակյան Զարմայիլ - 9426 /ինը հազար չորս հարյուր քսանվեց/ դրամ:

5) Դալլաքյան Սուրեն - 30000 /երեսուն հազար/ դրամ:

6) Ստեփանյան Նվեր - 5860 /հինգ հազար ութ հարյուր վաթսուն/ դրամ:

7) Եսոյան Սլավիկ - 34400 /երեսունչորս հազար չորս հարյուր/ դրամ:
8) Պեպանյան Էդվարդ - 13618 /տասներեք հազար վեց հարյուր տասնութ/ դրամ:
9) Շահպարոնյան Երվանդ - 26136 /քսանվեց հազար մեկ հարյուր երեսունվեց/ դրամ:
10) Էմինյան Երազիկ - 3150 /երեք հազար մեկ հարյուր հիսուն/ դրամ:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՐՄԵՆՅԱՆ ՀԱՅԿԱՐԱՄ
2. ԱՔՈՒԼՅԱՆ ՍԵՎԱԿ
3. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԵԼԵՆԱ
4. ՂՈՒՄԱՇՅԱՆ ԱՐՄԵՆ
5. ՄԱՆՈՒԿՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ
6. ՄԱՆՎԵԼՅԱՆ ԿԱՄՈ

Համայնքի ղեկավար՝ ԷԴԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շահումյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Շահումյան, (0322) 3 84 62, 3 78 97, shahumyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ՀՈՒՆՎԱՐԻ 2018թվականի N 05-Ա

ՇԱՀՈՒՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2018 Թ-Ի ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի դրույթներով՝

ավագանին որոշում է.

Հաստատել Շահումյան համայնքի 2018թ-ի տարեկան աշխատանքային պլանը՝ համաձայն հավելվածի:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՐՄԵՆՅԱՆ ՀԱՅԿԱՐԱՄ
2. ԱՔՈՒԼՅԱՆ ՍԵՎԱԿ
3. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԵԼԵՆԱ
4. ՂՈՒՄԱՇՅԱՆ ԱՐՄԵՆ
5. ՄԱՆՈՒԿՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ
6. ՄԱՆՎԵԼՅԱՆ ԿԱՄՈ

Համայնքի ղեկավար՝ ԷԴԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ